Հաստատում եմ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ռեկտոր,
պրոֆեսոր Սրբուհի Գեորգյան

ԿԱՐԾԻՔ

Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի
Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի
2023թ. նոյեմբերի 14 ի. 5 նիստի՝
Ռուզաննա Տիգրանի Միքայելյանի
«Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը»
ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն»
մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության վերաբերյալ

Նիստին մասնակցել են արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու Ս. Գրիգորյանը, գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Հակոբյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ա. Բաղդասարյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ս. Մելիքյանը, արվեստագիտության թեկնածու Ա. Առաքելյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Իսկոյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Զ. Մալոյանը, ասիստենտ Վ. Գամաղելյանը և ամբիոնի մյուս անդամները:

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի կինոթատրոնների շենքերի ինտերիերների, դրանց նախագծման, զարգացման և մի շարք այլ խնդիրների ուսումնասիրությանը: Պետք է նշենք, որ սույն թեման չի հանդիսացել որպես հետազոտության առանձին առարկա: Այդ առումով ատենախոսությունը արդիական է և հույժ կարևոր:

Հեղինակը ներկայացրել է համալիր ուսումնասիրություն, որում լուսաբանում և վերլուծում է կինոթատրոնների ինտերիերների փոփոխությունը ժամանակի ընթացքում: Ուսումնասիրելով Հայաստանի կինոթատրոնները ստեղծման պահից մինչ մերօրյա շրջանը՝ ատենախոսը ներկայացնում է դրանց դինամիկ զարգացումը, մանրամասն դիտարկում է նյութերն ու պահանջները, տալիս է պատմական կարևոր ակնարկ:

Աշխատանքը կազմված է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ ատենախոսության հեղինակը հիմնավոր ներկայացրել է անհրաժեշտ բոլոր դրույթները՝ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նշված են նպատակն ու խնդիրները, բավարար է թեմայի գիտական մշակվածության աստիճանը և գիտական նորույթը:

Առաջին գլուխը կրում է «Ընդհանուր տեղեկատվություն Հայաստանի կինոթատրոնների և դրանց ինտերիեր դիզայնի վերաբերյալ» խորագիրը: Այն բաղկացած է հինգ ենթագլուխներից, որոնցում ուսումնասիրվում են կինոթատրոնների ստեղծման անհրաժեշտ պայմաններն ու դրանց առաջին դրսևորումները ոչ միայն Հայաստանի տարածքում մինչև խորհրդայնացումը, այլև նույն ժամանակաշրջանի միջազգային փորձը, դրանց կառուցվածքը, տիպերը:

Երկրորդ գլուխը, որի խորագիրն է «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը մինչև 1970թ.» կազմված է ութ ենթագլուխներից: Ուսումնասիրման առարկա են անհատական նախագծերով կառուցված «Նաիրի», «Հոկտեմբեր», «Մոսկվա», «Հայրենիք», «Ջերմուկ», «Էջմիածին», «Լալվար», և տիպային նախագծերով կառուցված «Կոմիտաս», «Արագած», «Անի», «Ուսանող», «Ձեյթուն», «Ավարայր», «Արագիլ», «Չարենցավան», «Հայաստան» կինոթատրոնները: Մանրամասն ներկայացվում է «Մոսկվա» կինոթատրոնի նախագծման ընթացքը և դրանից հետագա զարգացում ստացող ողջ կառույցի համալիրն իր գունային, նյութական, ծավալային առումով: Պետք է ասենք, որ հենց այս կառույցը մեծ ազդեցություն ունեցավ Հայաստանի և մասամբ ողջ Խորհրդային Միության նմանատիպ շինությունների վրա: Անդրադարձ է կատարվում ճարտարապետների փնտրտուքներին, ինչը կարևոր է կառույցի, որպես միասնական համալիրի ուսումնասիրման համար: Յուրովի դիտարկվում են տիպային կառույցները,

որպես ժամանակի պահանջարկ ունեցող մշակութային օջախներ, ինչը բխում էր պատմական և տնտեսական խիստ պայմաններից:

Երրորդ գլուխը կրում է «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը 1970 թ.-ից մինչև 1991թ.» խորագիրը: Այն կազմված է չորս ենթագլուխներից և ուսումնասիրում է «Դիլիջան», «Ռոսիա», «Գարուն», «Հայաստան» կինոթատրոնների ինտերիեր-դիզայնը և դրանց համապատասխան նյութը: Առանձնակի հետաքրքրական է տաղանդավոր ճարտարապետների համառ աշխատանքն աշխարհիկի և հոգևորի ներդաշնակման հարցում, ինչի լավագույն արդյունքն էր «Ռոսիա» (ներկայիս «Այրարատ») կինոթատրոնի շենքը իր նոր նյութերի և լոկալ դիզայնի դրսևորմամբ: Վերը նշված օրինակից կարելի է բխել այն եզրակացության, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում մի շարք շինություններ կատարվում էին մոդեռնիստական մոտեցումներով:

Չորրորդ գլուխն է «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը 1991 թ.-ից առ այսօր»: Այն նվիրված է արդի կինոթատրոններին, որոնք հագեցած են ժամանակակից տեխնիկական միջոցներով և համահունչ են ուսումնասիրվող ասպարեզում աշխարհում տիրող փոփոխություններին: Ուսումնասիրված են «Սինեմա Սթար», «Կինոպարկ», «S'Unique», «Քաջարանի սինեմա» կինոթատրոնների ինտերիեր դիզայնը:

Ատենախոսության մեջ աղյուսակի տեսքով ներկայացված են ուսումնասիրվող կինոթատրոնները: Եզրակացություններում յոթ կետով արտացոլված են ուսումնասիրության հիմնարար կետերը:

Օգտագործված գրականության ցանկը բաղկացած է 119 աղբյուրով, որում առանձին են ներկայացված արխիվային նյութերը, գրքերը, հոդվածները, էլեկտրոնային աղբյուրները: Հավելվածում ներկայացված են 21 գծագիր և հատակագիծ, նաև 69 լուսանկար, որոնք արտացոլում են աշխատանքում ուսումնասիրվող նյութը:

Կատարված աշխատանքը ծավալուն, համալիր ուսումնասիրություն է, որում հետևողական ներկայացված են կինոթատրոնների կայացման ընթացքը, առաջ քաշվող խնդիրները: Հեղինակը հանգամանալից ներկայացնում է ուսումնասիրվող կինոթատրոնների ճարտարապետական լուծումները, կառուցվածքը ու հատակագիծն, դասավորությունն ու էլեմենտները, ոճը, օգտագործվող նյութերը:

Աշխատանքին ներկայացվող դիտողություններն են.

- Շարադրվող բառերում առկա են մի շարք տառերի բացթողումներ.

- Հավելվածում զետեղված վերատպությունները ներկայացված են խիտ և աչքի համար ոչ այնքան ընկալելի: Ցանկալի կլիներ դրանք դասավորված լինեին ազատ և ավելի պատկերավոր:

Նշված դիտողությունները էական ազդեցություն չեն կրում աշխատանքի որակի վրա: Աշխատանքում պահպանված են գիտական ուսումնասիրության բոլոր անհրաժեշտ կանոնները: Կատարված է ատենախոսության թեման լուսաբանող ծավալուն համալիր հետազոտություն, որում պահպանված են գիտական ուսումնասիրությանը ներկայացվող պահանջները: Ատենախոսությունը հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է, որն իր արտացոլումն է գտել տասնմեկ գիտական հոդվածներում:

Աշխատանքը բավարարում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ հեղինակ Ռուզաննա Տիգրանի Միքայելյանը կարող է արժանանալ ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի իր հայցած գիտական աստիճանին:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության

ամբիոնի վարիչի պաշտոնակատար,

արվեստագիտության թեկնածու՝ Սյուզաննա Գրիգորյան

Սյուզաննա Գրիգորյանի ստորագրությունը

հաստատում եմ

ՀՊՄՀ գիտ. քարտուղար Մարիամ Իսպիրյան

20.11.2023թ.